

քալէ։ Առ վայր մը ուրիշ բան չես լսեր , բայց եթէ տախտակաց զարնուելու ձայնը , թիոց զջուրը ճեղքելը , կոնտոլիէրից ձայններուն աղմուկը և հուսկ ուրեմն բազմութեան ծիծաղին արձագանգը և զուարթութեան խօսակցութիւնները :

Բայց յանկարծ այն վայրկենական աղմուկին մէջէն շարժուեալ ձայնը կը լսուի : Մէկէն թիոց զարնուելը կը դադարի , ձայները կը լռեն , աղմուկը կը հանդարտի , խորին լռութիւն մը կը տիրէ , և ամենուն ուշադրութիւնը գէպ 'ի լաստափայտը կ'ուղղուի :

Այն լռութեանը մէջէն մարդկային քաղցրահնչիւն ձայն մը հազարումէկ ելեւէջներ ընելով օդը կը հնչեցնէ , հազարաւոր ունկնդրաց ոգիքը վառելով : Շնչոց մը նաւակէ նաւակ կը քալէ . այս անուն երգիչն է , կ'ըսէ մէկը . ոչ կը պատասխանէ ուրիշ մը , այս անուն թատերգակն է : Ամենը իրենց ծանօթ անձը կ'անուանեն . այլք հետաքրքրաբար տեղեկանալու կը հարցնեն . և այսպէս մինչդեռ երգչին անունը թեթեւ չնկաց մը կը վերցնէ ու երգչին ձայնը կը խափանէ , հեռու եղողներուն արգելք ընելով , շարժուեալ ձայնը դարձեալ բերնէ բերան կը քալէ , և այնու հետեւ ջրանցքին պալատք երգչին ձայնին արձագանգը կ'անդադարձնեն : Միաձայն երգիչը կը լռէ , և երգչաց դասը խմբովին իրենց բաղադրեալ ձայներովը անոր կը պատասխանէ : Կը դադարին նաև անոնք տեղի տալով երաժշտական գործնաց , որ իրենց աղմուկաւ միջոցը կը ծածկեն :

Այսպէս փոխին 'ի փոխ , երաժշտական գործնօք ու ձայներգութեամբ՝ ողջոյն ջրանցքը քալելով , լաստափայտը՝ բոլոր նաւակաց բազմութեամբ , դարձեալ ետ կը դառնայ մինչև այն տեղն ուսկից ճամբայ ելաւ , վերջ տալով հանգիսի մը որուն համբաւը մինչև հեռաւոր աշխարհներ տարածուեր է , ամենուն հետաքրքրութիւնը շարժելով և բազմաթիւ եկաւորներ հրաւիրելով :

Հ. ՅԱՆՈՐԾ Վ. ԻՍԱԿԵՐՏԵՆՑ :

Կը շարունակուի :

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես էրես 303.)

Գ Ա Լ Ի Լ Ի Ա .

Թափոր և Հերմոն , Բեքսան ,
Բետիդոշա և Զրնորն Յովսէփայ :

ԺԵ .

Թափոր՝ համբաւաւոր Հփէից և քրիստոնէից նուիրական աւանդութեանց մէջ , կը բարձրանայ Յեզրայելի դաշտաւայրին մէկ ծայրը : Պ . Շուպէրդ պաւարացի ճանապարհորդն , որ վերջին ժամանակներս ուղևորեց 'ի Պաղեստին , 1747 ոտք բարձրութի կու տայ այս լեռան : Թափոր բոլորովին կզգիացեալ է և իբրև թէ որբացած . ժայռոտ ու գահաւէժ կողեր ունի : Իր հինաւուրց կրօնաւոր գեղեցիկ ծաղիկներով ու ծառերով զարդարուած է . և դադաթան վերայ ձուած և հարթ և ընդարձակ դաշտագետին մը կայ . որոյ վրայէն հրաշալի չրջահայեաց տեսարան մը կը տարածուի : Մէկ կողմանէ կը տեսնուի Միջերկրական ծովուն կապուտակ անսահման մակերևոյթը , և միւս կողմէն Յեզրայելի լայնածաւալ դաշտավայրը , որուն ցօղերը այնքան բանաստեղծօրէն երգած է Դաւիթ իր սաղմոսաց մէջ : Եւ Գեղբուս լեռանց գիծն որ այնքան մահաբեր եղան Սաւուղայ , կը փակեն այս ընդարձակ չրջահայեաց տեսարանը : Թափոր լեռան դադաթը երբեմն այն աստիճան մառախլով պատած կ'ըլլայ , որ գծուարին կ'ըլլայ որոշել ամենամօտ առարկաներն անգամ :

Այս լեռը ըստ հաւանական աւանդութեան՝ Յիսուսի պայծառակերպութեամբ փառաւորուած ըլլալով , Հեղինէ 'ի յիշատակ ատոր՝ եկեղեցի մը և Երեք տաղաւար անուամբ վանք մը չենել տուաւ լեռան վերայ , որ և երկար ժամանակ պանդխտաց ուխտատեղի

միեղաւ: Բայց յետոյ պարզելով այս լե-
րան վերայ օսմանեան դրօշը՝ կործանե-
ցան այս կրօնական յիշատակաց տե-
ղուանքն, և անոնց աւերակաց վերայ
Մէլէք Ատէլ սուլդանը տասնուեօթը
աշտարակով ամրացած զօրաւոր բերդ
մը կանգնել տուաւ լերան վրայ: Այս
օրուան օրս լերան վրայ ուրիշ բան
չերևիր, բայց եթէ աստ անդ ցրուած
մեծազանգուած քարի հատորներ, 'ի
վկայութիւն այն շինուածոց:

Կ'ըսեն որ թափոր լերան ստորոտն
էր, ուր Բարակ՝ Դերովրա մարգարէու-
հւոյն հրամանաւ ժողովեց իր բանակը
պատերազմելու ընդէմ Սիսարայ: Կան
ոմանք ալ որ կը պատմեն թէ թափոր
լերան վերայ Մէլէքիսեղեկ ընդ առաջ
ելած ըլլայ Աբրահամու, և հոն մատու-
ցած իր զոհերն: Եւ Ատրիքոմիոս կ'ըսէ
որ մինչև իր ժամանակը կը ցուցնէին
այն սեղանը որոյ վերայ մատուցան զո-
հերն: Քանի մը անվաւեր պատմութեց
մէջ կը կարգամբ որ Մէլէքիսեղեկ եօթը
տարի կեցած ըլլայ այս լերան վերայ
ապաշխարելու իր մեղաց վերայ. և Աբ-
րահամ Աստուծոյ հրամանով երթալով
գտնել զՔահանայապետը, ընդունած ըլ-
լայ իրմէ սուրբ օծութիւն և օրհնութիւն:

Թափոր լեռնէն ոչինչ հեռի կայն Են-
տոր, Դովթայիմու Նայիմ քաղաքները:
Ենտոր այն տեղն է ուր էր վհուկը. ու-
րուն հետ խորհրդակցեցաւ Սաւուղ յա-
ռաջ քան զպատերազմն Գեղբուայ: —
Դովթայիմ Յովսեփայ եղբարց գտնը-
լած տեղն է, ուր ծախեցին զինքը իս-
մայելացի վաճառականաց: — Իսկ Նա-
յիմ այն քաղաքն է, ուր Յիսուս յարու-
թիւն տուաւ այրւոյ մը դստեր:

Թափոր լերան վրայէն կը տեսնուի
և լեռնն Հերմոն գեղեցիկ տարածուած
տեսութեան առջին. և է յայսկոյս Յոր-
դանանու, իսաքարայ ցեղին մէջ. 'ի
հարաւակողմն թափորի: Պաղեստինու
ըրիստոնեայք և կամ շրջաբնակքն Հեր-
մոնի՝ հասարակաց զգածմամբ մը կը
պատմեն որ Ադամ նկարագրելով Սե-
թայ որդւոցը իր Դրախտին մէջ վայելած
ուրախութիւն և վայելքը, անոնց ոմանց

սրտին մէջ փափաք զարթուցած ըլլայ
մտնալու հոն, և այս վախճանաւ ասոնք
առանձնացած ըլլան այլոց ընկերու-
թենէն և ընտրած Պաղեստինու մէջ Հեր-
մոն լեռը 'ի բնակութիւն, սրբութեամբ
և արդարութեամբ ապրելու 'ի միայնու-
թեան անդ:

Ասոնք այսպէս այլոց ընկերութենէն
մեկուսացած, կոչեցան Որդիք Աստու-
ծոյ, և իրենց օրինակովը գաղափար
տուին վանական կենաց: Բայց ետքը
Սեթայ որդիքը ակնկալութեամբ Դրախ-
տին իբրև 'ի ժառանգութիւն, եկան
գտնելու Կայենի որդիքը և իրենց մեր-
ձաւորները, և ձանձրացած ըլլալով յա-
ռանձնական կենաց՝ առին զգստերս
նոցա և ծնան զհսկայս:

Հերմոն լերանց հարաւակողմն իջնե-
լով կը գտնեմք Բեթսան քաղաքը. որոյ
վերայ յիշատակելիք ուրիշ բան չունիմք,
բայց եթէ այս որ երբ փղշտացիք տի-
րեցին Սաւուղայ և Յովնաթանու զօրաց
գնդին, Բեթսանու պարիսպներէն կա-
խեցին զանոնք: Ատկէց կը հետևի ու-
րեմն որ Սաւուղայ ժամանակ դեռ Քա-
նանացւոց ձեռքն էր այս քաղաքը. և
Եբրայեցւոց անցաւ Սողոմոնի ժամա-
նակ: Եւ որովհետև Յոյնք այս քաղաքս
Սկիւթոպօլիս կ'անուանեն, անոր հա-
մար իմաստունը կ'արծեցին որ Քրիս-
տոսէ 634 տարի առաջ, երբ Սկիւթա-
ցիք Պաղեստինէն կ'անցնէին, որոյ վե-
րայ կը խօսի Հերոդոտոս, գաղթակա-
նութիւն մը հաստատած ըլլան այս քա-
ղաքիս մէջ: Բայց հաւանական չերևիր
որ այս դէպքս՝ որուն վերայ արդէն ե-
բրայական յիշատակարանք չեն խօսիր,
յետ բազում դարուց անուան փոփո-
խութիւն պատճառած ըլլայ. վասն զի
յունական լեզուն նոյն դէպքէն շատ ետ-
քը տարածեցաւ Պաղեստինու մէջ: —
Իսկ այլք կ'արծեցին որ Սկիւթոպօլիս
անունը Սիւքքօ-քօլիս անուան խան-
գարուածն ըլլայ, որ կէս եբրայական
և կէս յունական անուն մ'է, և կը նշա-
նակէ քաղաք տաղաւարաց. բայց այս
ևս չէ հաւանական ենթադրութիւն:

Պիլնիոս ուրիշ անուն մ'ալ կու տայ

այս քաղաքիս, և է նիսա, զոր կը հաս-
տատեն և եզիպտական պատմութեան
հին յիշատակարանը. վասն զի ըստ
նոցա աւանդութե Բեքսանէի կամ Նի-
սայի մօտ առաջին անգամ գտան իսիս
և Ոսիրիս զցորեան, զգարի և զորթա-
տունկ՝ վայրենի և անմշակ վիճակի մէջ:

Բայց նախ պէտք է որոշենք այս Նիսա
քաղաքիս դիրքը: Ասոր վերայ ամենէն
առաջ խօսողն Հոմերոս եղած է, որ
կ'ըսէ. « Կայ Նիսա անուամբ քաղաք մը
կառուցեալ բարձր լեռան մը վերայ,
զարդարեալ ծաղկի ծառերով, փիւնի-
կէէն շատ հեռու, մերձաւոր ջուրց Ե-
գիպտոսի »: Այս խօսքս զոր 'ի մէջ կը
բերէ Դէոդոր, ընդհանուր կերպով կը
դնէ զՆիսա 'ի մէջ Արաբիոյ, ընդ մէջ
Նեղոսի և Փիւնիկէի: — Բայց Պլինիոս
աւելի ճշգրտաբան կը դնէ զՆիսա 'ի
Պաղեստին, 'ի վերայ սահմանացն Արա-
բիոյ: Եւ Յովսեպոս կ'իմացընէ մեզ որ
այս Նիսա քաղաքը որ նախ կոչէր 'ի
Յունաց Սկիշքոպօլիս, կ'ըսուէր իրեն
ժամանակ Բեքսանէ, և Յորդանանէն
անդին ընդարձակ դաշտի մը ծայրը
շինուած էր: Ասկէ կը հետեի որ այս
երեք անուններն ալ զմի և նոյն քաղա-
քը կը նշանակեն: Ոսիրիսի ինչպէս
նաև Դէոդորի ժամանակ Արաբիոյ սահ-
մանը միշտ անորոշ ըլլալով, կարելի է
որ Արաբիոյ մերձաւոր Պաղեստինու
մասը իբրև Ասորեստանի կամ Արաբիոյ
երկիր համարուած ըլլայ ընդհանուր
անուամբ:

Հիմա Բեթսան 70 կամ 80 տամբ
պզտի գեղ մ'է: Կը գտնուին դեռ ևս իր
երբեմն փառաց և պայծառութեան նշա-
նակներն, որ են իր աւերակներն, որոց
մէջէն առուակ մը կ'անցնի Մուսայէք-
Պիսսան անուամբ: Աս աւերակաց բռու-
նած տարածութենէն կը տեսնուի որ
քաղաքը առաջ երեք անգղիական մղոն
տարածութիւն ունեցած պիտի ըլլայ:

Սկիւթոպօլիս քաղաքէն ոչինչ հեռի
կայ քաղաքն Սաֆէտ, զոր ոմանք 'ի
ճանապարհորդաց կը կարծեն թէ ըլլայ

հին Բետիդուս քաղաքը: Սաֆէտ իր
շինութեան եղականութեանը համար
կրնայ առաջին համարուիլ Պաղեստինու
մէջ: Ոսիրկայ հինգ մասերէ կը ձևանայ,
որոնք բաւական երկար միջոցաւ զա-
տուած և որոշեալ են 'ի միմեանց, զոր
տեսնողն կը կարծէ անկենդրոն քաղաքի
մը վերաբերող հինգ մեծամեծ արուար.
ձաններ: Քաղաքը չունի ոչ պարիսպ ոչ
որոշեալ սահման, ոչ կենդրոն և ոչ միու-
թեան կէտ: Գրեթէ ամեն դար մէյմէկ
նոր կերպարան առած է, կամ տարա-
ծուելով կամ ամբողջութեամբ, կամ ելլե-
լով և կամ իջնելով, կղզւոյ մը պէս որ
կը մեծնայ կամ կ'ամբողջի ըստ ջրոց ո.
ղողման: — Քաղաքը թէպէտ անպա-
րիսպ է, բայց այս հինգ մասերն՝ ժայռի
մը վերայ բարձրացած ձուռն և բերդ մը
իրարու հետ կը միացնէ, և իր պաշտ-
պանութեան տակ առած կը պահպա-
նէ: Այս բերդին ճարտարապետութիւնը
արաբական է, բայց չեմք գիտեր իր հիմ-
նադիրը. սակայն քանի մը նշաններէն
կրնամք հաւանօրէն Դամասկոսի խա-
լիֆայից ընծայել:

Այս քաղաքիս տուններն կղզիացեալ
են և ամենքն ալ սպիտակ դարաւորով
շինուած, որոնց իրարու մէջ ունեցած
կանոնաւորութիւնը ակնհաճօյ է 'ի
տեսանել: Այս տուններն կրակարան
չունին, և պէտքս կը լեցնեն իւրաքան-
չիւր բնակարանաց առջին շինուած
պզտի գաւթին մէջ: Գետնաշարժի եր-
կիւղը կ'արգելու զժողովուրդը բարձ-
րացնելու իրենց տուները. այս պատ-
ճառիս համար թէպէտ տուններն ցած
բայց հաստահիմն և ամրաշէն են: Մըզ-
կիթներն իսկ որ ընդհանրապէս արեւը
ամեն կողմ գեղեցկաշէն են, հոս ընդ-
հակառակն փոքր, աննշան և անաշտա-
րակ են: — Քաղաքին բնակիչը գոցցես
9000 կը հասնի, և գումարուի 'ի Մահ-
մետականաց, 'ի տեղաժին և յօտարա-
ծին հրէից և 'ի քրիստոնէից: Այս ե-
րեք կրօնից մէջ եղած հակակրօնութիւնը
արտաքսապէս ալ կ'երևի տեղւոյս բնա-
կաց բնակութենէն: Իւրաքանչիւրը ի-
րեն առանձին թաղը ունի: Տեղաժին

Հրեայք Բեռլինում¹ ըստ լեռան զառ ի վայրին վերայ կը բնակին, և իրենց թաղը ըստ մեծի մասին հին շինուածոց աւերակներն ու փլածոյներն գրաւած են: Իսկ Մահմետականաց թաղը Հրէից թաղէն հովիտով մը կը բաժնուի, և այս երկուքին մէջ կ'իյնայ քրիստոնէից թաղը: Հրեայք զՍաֆէտ քան զամեն ուրիշ իրենց քաղաքները աւելի կը յարգեն. վասն զի համուզուած են իբրեւ ի հաւատոյ՝ որ Մեսիայն յառաջ քան հաստատելու յերուսաղէմ իր զօրութեան աթոռը, պիտի թաղաւորէ աստ քառասուն տարի: Այս ակնկալութիւն համակամութեամբ տանել կու տայ իրենց ամենայն նեղութեանց որ կը կրեն յերեսաց մոլեռանդն բնակչաց տեղոյս: Հրեայք իբրեւ գերի եղած են իրենց թաղին մէջ, և չեն կըրնար Մահմետականաց մօտենալ աւանց քարկոծման վտանգի մէջ լինալու: Կանայք իսկ որ այնքան պատուեալ են յԱրևելս, արանց հաւասար նախատանաց և ծաղու նշաւակ եղած են: — Ռաբունապետը այս քաղաքը գերազանց կը համարի Գալիլիոյ քան ուրիշ ամեն քաղաքները. իր իշխանութիւնը խոնարհագոյն է Տիրերիոյ Ռաբունապետին իշխանութենէն. վասն զի ասոր դատաստանին կը հանուին կրօնից, պաշտամանց, և օրինաց ամեն վէճերն, և իր վճիռը ծայրագոյն զօրութիւն ունի: Տեղածին Հրէից թաղը թէպէտ շատ ուղորմելի երևոյթ մը կ'ընծայէ, բայց օտարածին Հրէիցը շատ աւելի տխուր և անկենդան է: Տանց սեմին վերայ ամենեւին մարդկային էակ մը չես տեսներ. և բոլորովին անապատ կը կարծուէր, եթէ չտեսնայիր երբեմն երբեմն խեղճ կին մը, որ դադտագողի կերպով իր տունէն ելլալով ուրիշ տուն մը կերթայ: Օտարածին Հրէից լեզուին, բարուց և բնաւորութեանց նայելով այն.

¹ Այս Բեռլինու անունը որ կը տրուի Սաֆէտի մէջ բարձրացած լեռան, կրնայ վկայութիւն մ'ըլլալ, այն վերոյասացեալ կարծեաց թէ Սաֆէտ հին Բեռլինու քաղաքն պիտի ըլլայ:

պէս կ'երևի որ Գերմանիայէն յառաջ եկած ըլլայ իրենց ծագումը:

Այս քաղաքիս մէջ արուեստից վիճակը շատ մեծ նշանակութիւն մը չունի: Իր տուրևառիկ վաճառականութեան գլխաւոր նիւթերն են բամբակահիւս շինուածներ, նարօտաներկութիւն լեղակի, և կտաւ: Սաֆէտի կըտաւագործ Տաճկաց յաջողակութիւնը համալաւոր է բոլոր Պաղեստինու մէջ:

Գեթսեմանիի ձիթենիներէն ետքը Արևելքի ամենէն գեղեցիկ ձիթենիքը Սաֆէտի ձիթենիներն են: Ասոնցմէ շատերը շրջապատի լայնութեան կողմանէ կը հաւասարին Բալմա կղզոյն և Անտալուսիայի ձիթենեաց, ուր տեղեաց ձիթենույ ծառերն մեզի ծանօթ տեղեաց ամենէն համալաւորն կրնան համարուիլ:

Հրեայք Սաֆէտի մէջ երկու ժողովարան ունին, որոց մին կը վերաբերի այն օտարածին Հրէից որ թողլով իրենց ծրնրդեան վայրը, հոս եկած բնակած են, տեսնելու համար իրենց հարց երկիրը. իսկ միւսը տեղածին Հրէից համար է:

Պ. Ժիլօ ճանապարհորդ որ այս երկուքին ալ այցելութիւն ըրած է, կ'ըսէ թէ « Երկուքն ալ անապատ են. փայտէ նստարաններն, եզիպտական փսիաթ մը, երկու խեղճ կանթեղ, որոց մէջ կանաչ ձէթ կը վառեն, զորոնք մաքրելու անփոյթ են, խորհրդական պահարանը որոյ վերայ կը հանգուցանեն Ս. Գիրքը, ահա ասոնք են բոլոր եղած կահ կարասիքը: Պատերն մերկ են, և ամենեւին կանանց համար վերնատուն մը չըկայ, այնու հանդերձ որ Սաֆէտի ժողովարանքն համալաւորն են: Քաղքին կործանմանէն առաջ որ պատահեցաւ յամին 1759ին սաստիկ գետնաշարժով մը, կար քաղքիս մէջ հռչակաւոր ճեմամարան մը, Բունաց կայսերաց ժամանակ Տիրերիոյ մէջ եղածին նման: Ասիկա ուրիշ բան չէր բայց եթէ կանոնաւոր դպրոց մը, ուսկից կ'ելլէին Պաղեստինու ժողովարանաց պէտք եղած Ռաբ.

բունիններն : Հրեայք տպարան մ'ալ ունէին, ուր տպուեցաւ այն ծիսարանը, զոր կարգի դրաւ յամին 1750 Մովսէս Կալանտ ճեմարանին նախագահը. բայց այս տպարանը երկար կեանք չունեցաւ :

Մաֆէդ քաղքէն երկու ժամու չափ հեռու կը գտնեմք խաւն մը, որուն մէջ կ'ըսեն թէ ըլլայ Յովսեփայ ջրհորը, ուրուն մէջ ձգեցին զինքը իր եղբարքը, վաճառականաց ծախելէն սուաջ : Այս ջրհորը չորս ոտք լայնութիւն և երեսուն ոտք խորութիւն ունի : Մէջը անպակաս ջուր կայ, և կանոնաւոր շինուած է : Այս ջրհորին մօտ մզկիթ մը կայ ուր թաղուած է Ապտուլլահ անուամբ շեխ մը, և մզկիթին վերայ արաբական լեզուաւ գրութիւն մը կայ :

Յովսեփայ ջրհորը հաւասարապէս կը պատուեն թէ քրիստոնեայք և թէ մահմետականք : Կարավանաց ճանապարհորդքը ինչ կրօնք ալ դաւանին, այս յիշատակաց տեղւոյս քովէն չեն անցնիր առանց աղօթք մ'ընելու 'ի պատիւ Յովսեփայ : — Բաց 'ի անցորդ ճանապարհորդաց որ կու գան ամեն օր ապաւէն մը փնտուելու այս ջրհորիս եղբքը, խանը ամբողջ տարին բնակուած է զօրաց գնդէ մը 'ի պաշտպանութիւն տեղւոյն :

Բոլոր շրջակայ տեսանելի լեռներն մեծազանգուած սևագոյն քարի կտորներէ կը բաղկանան, որ ըստ աւանդելոյ բնակչաց տեղւոյս իրենց նախկին կազմութեան ժամանակ սպիտակ էին. բայց օր մը, կ'ըսեն, Յովսեփայ կորսուելէն ետքը, երբ Յակովբ փնտուելու ելաւ իր սիրելի որդին, և արտասուելով կ'անցնէր այս լեռներէն, արտասուքը այս քարանց վերայ թափելով, շուտով բոլոր այս քարերն սևեցան :

Կը շարունակուի :

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱԾԱԿ ԵՐԵՅՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

(Տես երես 308 :)

Այս բանս առհասարակ ամեն սողնոց յատուկ է. սակայն այս ողնաւոր կենդանեաց երրորդ դասը բաղկացնող երեք կարգ սողնոց իւրաքանչիւրը, իր առանձին պատմութիւնն ունի, որոնց անուններ են կրիայք, մողէսք և օձք :

Կրիայից դանդաղութիւնը առակ եղած է, և ատոր վրայ շատ զարմանալու չէ. օդը շնչել չեն կրնար, որովհետև իրենց կողերն, որ սողնոց մէկ հատիկ շնչելու միջոցն է, բոլորովին անշարժ են : Այդ պատեանն որ կրիայն իր կռնակը կը կրէ, և որու ներքեւ, ինչպէս թէ վահան մը ըլլար, ամեն պզտի վտանգին կը ծածկուի, իր կողերովը ձևացած է, որոնք լայնալով մէկմէկու հետ կը յարին, նըման տախտակամածի մը տախտակներ, որուն որ մէկմէկու մէջ կ'ազդուցուն : Ասկէ յայտնի է որ երթեկէ շարժումը ունենալ չեն կրնար, որով և շնչին օդածիգ փուքը չիշարժիր : Ասոր ճարն ինչպէս կը տեսնայ կրիայն : Մենք ինչպէս ջուրը կը կլլենք՝ ինքն ալ նմանօրինակ օդը կը կլլէ : Կը տեսնես որ բերանը կը բանայ ու կը գոցէ, ճշմարիտ օդոյ պատառ մը մէջը փակելով որ ապա բերնին կողմունքներուն կ'ծկելովը՝ թոքոց մէջ կը մղուի : Իր շատ ընդարձակ թոքերն, այս կերպով քիչ քիչ օդով կը լեցուն, և երբ աղէկ մը կ'ուռին, ինչպէս կ'ըլլայ շատ ձիգ զսպանակի մը, կ'ամփոփուին և աւելի օդը դուրս կը մերժեն : Ասկէ կ'ըմբռնես որ այս կերպով շնչառութիւնը չիկրնար մեծ գործունէութիւն մը ունենալ, որով և կրիայն թեթեալ գնաց ընթացքով մըն ալ չիկրնար վազել :